ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 118-Հ

«20» 12 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 70 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 70 հրամանի (այսուհետ՝ Հրաման)՝

1) 1-ին կետը լրացնել նոր 25-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«25) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը աջակցող իրավաբանական բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 25-ի (կցվում է):»:

2) Հրամանը լրացնել նոր N 25 հավելվածով հետևյալ բովանդակությամբ.

«ՀԱՎԵԼՎԱԾ N 25
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«18» դեկտեմբերի 2019թ.
N 70 հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գլխավոր դատախազության (այսուհետ՝ դատախազություն) իրավաբանական բաժինը (այսուհետ՝ բաժին) աջակցող մասնագիտական ստորաբաժանում է:

2. Բաժնի ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է գլխավոր դատախազը:

3. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, ՀՀ դատախազության կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

4. Բաժինն իր գործառույթներն իրականացնում է դատախազության համակարգում գործող դատախազությունների, հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և աջակցող մասնագիտական կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ համագործակցության հիման վրա:

5. Բաժնի գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է աշխատանքային ծրագրի հիման վրա: Աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր կիսամյակ հաստատում է Գլխավոր քարտուղարը:

6. Բաժնի կառուցվածքում ընդգրկվում են բաժնի պետը և բաժնի աշխատակիցները: Բաժնի պետը և աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի նպատակներն են՝

1) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ դատախազության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենդրության կատարելագործման ապահովումը.

2) Դատախազության գործունեությանն առնչվող ոլորտներում քաղաքականության մշակման և մեթոդական ղեկավարման իրականացմանը աջակցելը.

3) Գլխավոր դատախազի կամ դատախազության դեմ ներկայացված դատական հայցերով, դիմումներով դատական ներկայացուցչության ապահովումը.

4) Բաժնի իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված իրավական ակտերի նախագծերի՝ գործող օրենսդության համապատասխանության ստուգումը:

6. Բաժնի խնդիրներն են՝

1) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ դատախազության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը, առկա բացերի և հակասությունների վերհանումը.

2) Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների՝ դատախազության գործունեությանն առնչվող որոշումների ուսումնասիրությունը՝ օրենսդրության կատարելագործման նպատակով.

3) Դատախազության քաղաքացիական ծառայողների նկատմամբ ծառայողական քննության իրականացման ապահովումը.

4) Դատախազության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովմանը աջակցելը:

3. ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի իրավասություններն են՝

1) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ դատախազության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակում, կատարելագործում.

2) Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների՝ դատախազության գործունեությանն առնչվող որոշումների իմպլեմենտացիային ուղղված աշխատանքների կատարում.

3) Դատախազություն ներկայացված առաջարկությունների, դիմումների քննարկում՝ բաժնի իրավասության շրջանակներում.

4) Դատախազության քաղաքացիական ծառայողների նկատմամբ ծառայողական քննության իրականացում.

5) Գլխավոր դատախազի կամ դատախազության դեմ ներկայացված դատական հայցերով, դիմումներով Հայաստանի Հանրապետության դատախազության դիրքորոշման ներկայացումը ՀՀ դատարաններում.

6) Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված իրավական ակտերի նախագծերի՝ գործող օրենսդության համապատասխանության ստուգում՝ բաժնի իրավասության շրջանակներում:

4. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Բաժինն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով ուսումնասիրությունների իրականացում և հայեցակարգային դրույթների նախապատրաստում, դատախազության գործունեությանն

առնչվող իրավական ակտերի վերանայմանը, հստակեցմանն ու պարզեցմանն ուղղված աշխատանքների իրականացում.

2) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ դատախազության գործունեությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ու իրավական ակտերի նախագծերի, դատախազության գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մեթոդական ուղեցույցների մշակման աշխատանքների կատարում.

3) կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության հետ համատեղ դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի, գլխավոր դատախազի հրամանների, կարգադրությունների և հանձնարարությունների նախագծերի մշակում.

4) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ այլ պետական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, կազմակերպությունների, քաղաքացիների ներկայացրած օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ լրացուցիչ, այլընտրանքային կարծիքի տրամադրում.

5) Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների՝ դատախազության գործունեությանն առնչվող որոշումների իմպլեմենտացիային ուղղված ուսումնասիրությունների, համեմատահիրավական վերլուծությունների և օրենսդրական բարեփոխումների մշակման աշխատանքների կատարում.

6) Գլխավոր դատախազի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրավական ակտերի նորմերի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման աշխատանքների կատարում.

7) Դատախազություն ներկայացված առաջարկությունների, դիմումների՝ օրենքով սահմանված կարգով քննարկման աշխատանքների իրականացում.

8) Դատախազության քաղաքացիական ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու հիմքերը պարզելու նպատակով ծառայողական ուսումնասիրության իրականացում.

9) Դատախազության քաղաքացիական ծառայողների ծառայողական քննության վարում և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին եզրակացության ներկայացում.

10) գլխավոր դատախազի կամ դատախազության դեմ ներկայացված հայցադիմումներով, դիմումներով դատական ներկայացուցչության իրականացում, այդ թվում՝ պատասխանների (առարկությունների), միջնորդությունների կազմման աշխատանքների ապահովում, դատական նիստերին մասնակցություն.

11) Բաժնի իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների

կողմից կազմված իրավական ակտերի նախագծերի՝ գործող օրենսդրության համապատասխանության ստուգում.

12) Դատախազությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների իրականացման աջակցմանն ուղղված այլ գործառույթների իրականացում:

5. ԲԱԺՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Բաժնի գործունեությունը համակարգում է դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալը:

10. Բաժինը գործում է բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

11. Բաժնի պետը հաշվետու և ենթակա է գլխավոր դատախազին, դատախազության գլխավոր քարտուղարին և դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալին:

12. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է գլխավոր դատախազը կամ դատախազության գլխավոր քարտուղարը կամ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ